

Երթն իրիկուան եկուորին...

Ու ձմեռներն ալ համբուն,
 Զըրաւիրակ զըւարթուն,
 Կանգնէի քովը ճամբուն.
 Ու ձիւնապատ հեք մարդուն
 Ես հայրօրէն, լայնաբաց
 Երկու թելըս պարզէի.
 Մի՛շտ քաղցրագին, նիւթացած
 Զըրաւէ՛րն ես ըլլայի:

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,
 Դաշտի ճամբու մը վըրան,
 Կա՛մ ըստորոտը լերան,
 Ուղեւորին ժամանման
 Ըսպասող հի՛ւրն ըլլայի:

25. ԲԱՂՁԱԼՔ

Արտաշէս Յարութիւնեան բանաստեղծին

Ի [1]Բարձունքներու լայնշի ճամբան ըլլայի,
 Որ ծաղկահիւս կողերէ վեր կը մագլի,
 Ու գագաթին հասած՝ նոր ու հեշտայի
 Զորիզոնին սնդուս գիծին կը նայի:
 Ու տանէի հոն հոգիներն ըսպառած,
 Ձանձրոյթն՝ որոնց ոլորտին վրայ կը փլչի,
 Ու ցոյց տայի՝ լայն հորիզոն անուրջի՝
 Բերրի դաշտերն ու ճամբաներն անմոռաց՝
 Ուր քաղցրութիւնն ի [1] հոգւոյն կ'ըլլայ հակուրջի: Ի [1]

Կատարներուն, հագած երանգ հինայի,
 Մրգաստանին, այգիներուն, դաշտերուն
 Մէջ պարագնաց հովին խմբերզն ըլլայի:
 Եւ ըլլայի ձայներիզը թրթըռուն,
 Աղբիւրներուն, կապուտաչուի ակերուն,
 Լիճին խաղաղ, ծալծալ մրմունջն երերուն,
 Շառաչն հըզօր՝ ովկիանին, գետերուն,
 Զամայնական Ձայնն ըլլայի, Ձայնն անհուն